

Յ Ո Ւ Յ Ա Վ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Հ Ի Ն Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Յ

ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ԿՕՍԿ

Իբրեւ ատաղձ Հայ տպագրութեան պատմութեան, մենք սա այժմ հրատարակութեան կուտանք, պատուական «Բանասեր» ամսաթերթին մէջ. «Հայերէն հին տպագրութեանց» հետեւեալ ցուցակն, առանց յաւակնելով ըսելու թէ՛ մեր այս ցուցակն իր մէջ կը պարունակէ ամբողջ հին տպագրութիւններն, Այո՛, մենք այնպէս կը կարծենք թէ պիտի գտնուին նաեւ հին տպագրութիւններ, որոնք թերեւս անծանօթ մնացած են մեզի մինչեւ ցայսօր, թէեւ այս հաւաքման գործին համար աշխատած ու ժամանակ տուած ենք քսան երկար տարիներ, եւ պիտի աշխատինք նաեւ ասկէց վերջն ալ ո՛րքան որ հնարաւոր է :

Կը խնդրենք յարգոյ ընթերցողներէն որ, մեր այս գործին թերութիւններուն վրայ ներողամիտ աչօք նային, եւ եթէ կարելի է փութան նաեւ ամբողջացնել պակասներն :

1512 — 1513

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼԿ

(Յակոբեան սպագրութիւնք)

1. ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ. (Ա. տպագրութիւն)

Տպագրեալ 'ի Թուականին Հայոց ԶԿԱ. (= 1512), ի Վենետիկ, ի Տպարանի D. I. Z. A :

Մանօրութիւն. — Այս մատեանէն կը գտնուի օրինակ մը՝ Երուսաղէտի Ս. Յակոբեանց Մատենադարանին մէջ, եւ երկու օրինակ ալ՝ Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանին մէջ :

2. ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ. (Ա. Տպգր.)

Տպագրեալ ի Թուականին Հայոց ԶԿԲ. (= 1513), 'ի Վենետիկ, 'ի Տպարանի D. I. Z. A :

Ճակատք. — Պատարագատետր է սա Յի Քի Այ :

Յիշատակարանը . — *Վրեցաւ Ար. տառս ի ԶԿԲ. (= 1513), 'ի օծապահ, քաղաքս ի Վէնէժ որ է Վէնէտիկ, Տոստնկոստեան, ձեռամբ մէլապարա յակորին, ով որ կարգայք մեղաց թողու թխն խնդրեցէք այ. » ։*  
*Մանօք. — Օրինակ մը կը գտնուի Սրբոց Յակոբեանց Մատենադարանին մէջ յԵրուսաղէմ, եւ օրինակ մըն ալ Տրդատ Եպս. Պալեանի անձնականին յատուկ գրատանը մէջ ։*

3. ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ .

*Տպագրեալ 'ի թուին Հայոց ԶԿԲ. (= 1513), ի Վենետիկ, 'ի Տըպարանի D. I. Z. A. — Ուրբաթագրքի հետ միասին տպուած է նաեւ 'Կիպրիանոս ։*

*Ճակատը . — Անուն գրոցս է սբ. ուրբաթագիրք ։*

*Մանօք. — Սոյն մատեանէն կը գտնուին, օրինակ մը՝ ի Մատենադարանի Մխիթարեանց Վենետիկոյ, օրինակ մը՝ Սրբոց Յակոբեանց Մատենադարանին մէջ յԵրուսաղէմ, եւ օրինակ մըն ալ՝ Տրդատ Եպս. Պալեանի անձնական գրատանը մէջ ։*

4. ՏԱՂԱՐԱՆ . (Ա. Տպգր .)

*Տպագրեալ ի թուին Հայոց ԶԿԲ. (= 1513), ի Վենետիկ, 'ի Տպարանի D. I. Z. A. ։*

*Ճակատը . — Տաղարան է սայ, հոգոյ եւ մարմնոյ ։*

*Մանօք. — Սոյն մատեանէն կը գտնուին, երկու օրինակ՝ Սրբոց Յակոբեանց Մատենադարանին մէջ յԵրուսաղէմ, եւ մի օրինակ ալ՝ Տրդատ Եպս. Պալեանի անձնական գրատանը մէջ ։*

5. ԱՂԹԱՐՔ .

*Տպագրեալ ի թուին Հայոց ԶԿԲ. (= 1513), 'ի Վենետիկ, 'ի Տըպարանի D. I. Z. A. — Աղթարքի հետ միասին տպուած է նաեւ՝ շեֆիւնարան Ճալալիսի ։*

*Մանօք. — Սոյն մատեանէն կը գտնուին, օրինակ մը՝ Սրբոց Յակոբեանց Մատենադարանին մէջ յԵրուսաղէմ, օրինակ մը՝ Վենետիկոյ Մխիթարեանց, օրինակ մը՝ Կեսարիոյ Ս. Կարապետի Վանուց, եւ օրինակ մըն ալ՝ Կեսարիոյ թեմերէն Մուսնուստուն գիւղի Ս. Եկեղեցւոյ գրատանց մէջ, — Ինչպէս կ'երեւի այս Յակոբեանց տպագրութենէն մինչեւ ցայժմ հինգ մատեաններ միայն ծանօթացած են մեզի որոնց վրայ մանրամասն գրուած՝ եւ գրած ենք նաեւ մենք, «Հանդիս Ամսօրեայ» ուսումնաթերթին մէջ, (Տես անդ 1889 երես 210, 1890 եր. 162, 1894 եր. 357) ։*

1565 — 1569

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԿՔ

(Արգարեան տպարանը 1865)

1. ՍՍՂՄՈՍ . (Ա. Տպգր. 1565ին)

Ճակատ . — Չունի , բայց ճակտին տեղ երկու պատկերներ դրուած են դէմ առ դէմ :

Ա. Յիշատակարան . — « Ի թուականիս Հայոց Ռ. Ժ. Գ. ամին ես թուխատցի արգար դպիրս խնդրեցի զայս նոր գիր , ի հոռմ ի Պետրոս փափուն , եւ երես հրաման շինելու , բարեխօսութեամբ այս կարսինայաց եւ այս Եպիսկոպոսին , եւ իմ գրայմիա սուլտանայ որդւոյս : Եւ եկեալ ի գեղեցիկ նաւահանկիստ մայրաքաղաքն որ կոչի Վանատիկ , ի թագաւորութեան Ելերիմոն դուճին , եւ շինեցաք զայս նոր գիր եւ զայս փոքր մեկնիչս սաղմոսաց » :

Բ. Յիշատակարան . — « . . . Կազմեցաւ Սուրբ արգարանս դաւթի լաւ եւ յընտիր աւրինակէ Գառնեցոյ վարդապետի , ի թուականի Հայոց Ռ. Ժ. Է. մայիս Ժէ , աւրն ուրբաթ , ժր. ժամի . . . առ ոտս Միլթիսեղեկ Եպիսկոպոսին , ի մայրաքաղաքն Վանատիկ , ընդ հովանեաւ Սուրբ մարկոս Աւետարանչին ի հայոց հոգիտունն , ի ժամանակ սրմովի . . . յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զաշխատողքս սորա , զառաջինք եւ զմիջինք եւ զվերջինքն , եւ աստուած յիշէ զձեզ իւր միւսանգամ զալուստն . . . ամէնն . Բ. Ճ. Կ. Բ. թուխտ է . ամէնն կոխած է , եւ իսկի գրչագիր չիկայ ի գիրքս , բաւ է » :

Մանօք . — Թերի եւ անկատար օրինակ մը կը գտնուի , ի Միլթիսեղեկեանց Մատենադարանի Վեներեկոյ , եւ ամբողջ օրինակ մը ի Միլան Յամբրոսեան Մատենադարանի մէջ :

2. ՓՈՒՔՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ կամ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ . (Ա. Տպգր. 1567ին)

Տպագրեալ ի Կ. Պոլիս ի Տպարանի Արգարու :

Մանօք . — Ընկալահրճեան Մաղաքիա արեղայէն աւանդուած է , որ՝ « Ռ. Ժ. Զ. (= 1567) , ի Հայրապետութեան Հայոց Տեառն Միջայելի ԻԱ . ամի Կաթողիկոսութեանն , ի Մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս , յերկրորդ ամի թագաւորութեանն Օսմանցոյ Սուլթան Սէլիմի , եւ ի չորրորդ ամի Պատրիարքութեան Տէր Յակոբ րաբունապետի Կոստանդնուպոլսոյ առ ոտս Յովհաննէս Եպիսկոպոսին , ընդ հովանեաւ Սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Հայոց , եղև ստանկայ , այսինքն պատնայ գիր , եւ տպեցաւ Փոքր քերականութիւն տղայոց , ձեռամբ անարժան կնքագիր դպրի մերս Յոզորին » :

3. ՏՕՆԱՑՈՅՑ . (Ա. Տպգր. 1568ին)

Տպագրեալ ի Կ. Պոլիս ի Տպարանի Արգարու :

Ծանօթ. — Նոյնպէս յիշեալ Մաղաքիա Արեղան կ'աւանդէ, «Ռ. Ժ. Է. (= 1568), Կոստանդնուպոլիս նոր ստանկիայ գիր սահմանեցին ի Հայրապետութեան Տեառն Միքայելին Էջմիածնի, եւ ի Պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Տէր Յակոբին, ընդ հովանեաւ Սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն, ձեռամբ Խորվիրապցի Առաքեալ Արեղային. արհեստագործութեամբ Արկար դպրին եւ իւր թագազարմ Անտոնիոսոս Սուլթան Սարկաւագին, որոյ գրովքն սպեալ Տօնացոյցս յառաջ բերեն :»  
Սոյն մատենէն պակասաւոր օրինակ մը կը գտնուի, ի Մատենադարանի Միթարեանց Վիեննայի :

4. ՏԱՂԱՐԱՆ . (Ա. Տպգր. 1568ին)

Տպագրեալ ի Կ. Պոլիս ի Տպարանի Արգարու :

Ճակոս . — Չունի .

Թիշասակարան . — «Թվին Ռ. Ժ. Է. յունիս սպագրեցաւ ձեռամբ Ֆառմանիոյ :»

Ծանօթ. — Օրինակ մը կը գտնուի Կերլայի Հայոց եկեղեցւոյն մէջ :

5. ԺԱՄԱԳԻՐԳ . — (Ա. Տպգր.)

Ճակոս . — Ժամագիրք համառօտեալ աղաւթմատուց .

Թիշասակարանը . — Ի թուղթն 58 : «Գրեցաւ Աղաւթմատուցս, թըվին Ռ. Ժ. Է. սպրիլ իէ :»

6. ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ . (Բ. Տպգր.)

Թիշասակարանը . — «ԿիւՋմեցաւ Աղաւթմատուցն եւ Պատարագաւ մատուցս ի թվականիս հայոց Ռ Ժ Է. (= 1568) մայիս . . . աւրն եչարթի : ի հայրապետութի. տր. միքայել . . . ի մայրաքաղաքն ըստամբաւը, ընդ հովանեաւ Սր. Նիկողոսին առ ոտս տր. Յակոբ, բարունայպետ (պա)տրիագին : Կամակցու թր. այս քահանայիցս եւ . . . ի քսան ոմի տր. սահակին եւ սարգիս եւ, եւ խորվիրապցի առաքել արեղին, իւ մղտեսի ուսուսին, խօճա տղվաթինայ եւ . . . հաւատորի տիրացու մէ . . . ին, խաչատուրին Անանիային մղտեսի Յոհան, յիշեցէր ի մաքրափայլ աղաւթս ձեր զաչխատող սորա զառաջինքն եւ զվերջինքս զարվեստիս, . . թելայգիրքն որ անձամբ աշխատեցան : եւ . . ըստացան : զխոճայ մուրատն : եւ զմղտեսի Ֆ . . նն, տիրացու մարտիրոսն, իպրահիման Սատա . . րն, եւ տոնեքն եւ խաթունփայան կրկին յիշեցէր ի մաքրափայլ աղաւթս ձեր եւ զարվեստի շինաւղն Արգար դպիրս կենակիցք եւ զհայրն իմ մըղտեսի . . . կ եւ զմայրն իմ, մղտեսի յ'եւան եւ զգերաբոյս . . . զաւակս տիրացու Սուլթանն Ած. յիշէ զիւր միւսանպստ զալուստն ամէն :»

Մանօր. — Մեր ձեռքը եղած օրինակին մէջ սկիզբէն չորս՝ եւ վերջերէն երեք թուղթեր ինկած են, Յիշատակարանին մէջ կէտադրուած անցանք այն բառերն որոնք անընթեռնլի եղած են՝ յիշատակարանի վերջին թղթին մասամբ մաշած ըլլալուն համար։ Արգարի մօրը անունը կը կարդանք թէ Եւա է. ի՛նչ մեծ բարեբախտութիւն պիտի ըլլար եթէ յիշատակարանին մէջ կարդացուէր նաեւ հօրը անունն ալ. վերջին կ'զիբէն կրնա՞նք արդեօք հետեւցնել թէ Աահակ էր. բայց շատ սարակուսելի։

Մատենաս է ժԳ. թերթ, ամէն մէկ թերթը ութական թուղթ (= 104 կամ 208 էջ), պակաս (ինկածներն) են եօթը, այժմ մնացած է միայն 97 թուղթք։ Ժամագիրքը՝ սկիզբէն մինչեւ 64դ թղթին վերջը կը լրանայ. ապա կը սկսի Պատարագամատոյցը։ Տպագրութեան տառերու ձեւն նման է ժԵ. դարու ձեռագրաց տառերու։ Չարդագիրք կան տեղ տեղ։ Խորագիրք շատ տեղ կարմրով են. թէ եւ ընդհանրապէս նոյն տառերով, տեղ տեղ ալ նոյնաձեւ բուրգիր մանր տառերով տողեր ալ կը տեսնուին։

7. ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ. (Ա. Տպգր.)

8. ՄԱՇՏՈՑ. — (Ա. Տպգր.)

Մանօր. — Այս երկու գիրքերն ալ կը վերագրուին Արգարի, իբր թէ՛ առաջինը տպագրած ըլլայ վենետիկի մէջ 1565, եւ երկրորդն՝ Կ. Պոլսոյ մէջ 1569ին։ Մաշտոցի մասին յիշատակութիւն մը կը գտնենք Մատենագրութեան մէջ (Տպ. 1883 վենետիկ) այսպէս. «... որուն միայն քանի մը թերթերն հասած են մեր ձեռքը։ Տառքն ձեռագրաց տառից ձեւոց նման, ինչպէս... ժամագրոց եւ Աղթարաց...»։

ԿԱՊԵՏ

Մ. ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՅԻՈՑ ՍԷԿ ԿՈՐ ՁԵՌԱԳԻՐԻՆ

13 Norham Gardens,  
Oxford, 5. 4. 1903

Monsieur

Je viens de recevoir l'avis selon lequel on va publier une nouvelle édition des Historiens Arméniens.

J'espère que les savants rédacteurs ne négligeront pas un MS de Մովսէս Կաղանկատուացի nouvellement acquis par le Musée Britannique.

Pour démontrer la haute valeur de ce MS j'ajoute pour votre revue une collation de trois pages (12, 13 et 14) seulement de l'édition imprimée de Moscou, livre I, chap. 10.

Votre très dévoué  
FRED. C. CONYBEARE